ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հոկտեմբերի 2020 թվականի N 1975

ԿԱՐԵՆ ՎԱՐՇԱՄԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմը, ելնելով բողոքարկված վարչական ակտի նպատակահարմարության տեսանկյունից, քննարկեց Կարեն Վարշամի Նահապետյանի կողմից 01.10.2020 թվականին ներկայացված թիվ 067/5295 վարչական բողոքը՝ Վանաձոր համայնքի ղեկավարի 04 օգոստոսի 2020 թվականի «Կարեն Վարշամի Նահապետյանի վերաբերյալ վարչական վարույթը վերսկսելու և վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 1527 որոշման դեմ:

Վարչական մարմինը վարչական բողոքը քննարկելիս առաջնորդվեց գործում առկա ապացույցներով:

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 07.07.2020 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Կարեն Վարշամի Նահապետյանը (հասցե՝ ք. Վանաձոր, Միչուրինի փող. 34տ) Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի սկզբնամասում, դեպի Վանաձոր-Սպիտակ տանող ճանապարհի ուղղությամբ՝ ճանապարհի աջ հատվածում, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ կառուցել է քարե շինություն, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք է:

2020 թվականի հուլիսի 07-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2020 թվականի հուլիսի 21-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով ծանուցվել և չէր ներկայացել Կարեն Վարշամի Նահապետյանը: 08.07.2020 թվականին ուղարկված ծրարի հետադարձ ծանուցումը առկա չէր, որի հիման վրա Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 24 հուլիսի 2020 թվականին ընդունվել է «Կարեն Վարշամի Նահապետյանի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնելու մասին» թիվ 1436 որոշումը:

Կարեն Վարշամի Նահապետյանը որոշման վերաբերյալ իրազեկվել է 01.08.2020 թվականին:

Ուստի Կարեն Վարշամի Նահապետյանի վերաբերյալ 07.07.2020 թվականին հարուցված վարչական վարույթը համարվել է վերսկսված, քանի որ դրա կասեցման հիմք դարձած հանգամանքը վերացել է և Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 04 օգոստոսի 2020 թվականի ընդունվել է «Կարեն Վարշամի Նահապետյանի վերաբերյալ վարչական վարույթը վերսկսելու և վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 1527 որոշումը:

Որոշման համաձայն Կարեն Վարշամի Նահապետյանը ենթարկել է վարչական պատասխանատվության՝ 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով և վերջինիս առաջարկվել է ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված համապատասխան եզրակացության դեպքում, երկշաբաթյա ժամկետում դիմել համայնքի ղեկավարին՝ օրինականացնելու ինքնակամ կառուցված շինությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն վարչական բողոքը կարող է բերվել վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

Վանաձոր համայնքի ղեկավարի 04 օգոստոսի 2020 թվականի թիվ 1527 որոշումը Կարեն Նահապետյանը ստացել է 07.08.2020 թվականին, հետևաբար այն ուժի մեջ է մտել 08.08.2020 թվականին: Կարեն Նահապետյանի կողմից վարչական բողոք ներկայացվել է 01.10.2020 թվականին, ուստի բողոքարկման ժամկետը համապատասխանում է օրենքին:

Վարչական բողոքում Կարեն Նահապետյանը խնդրել է վերանայել Վանաձոր համայնքի ղեկավարի 04.08.2020 թվականի թիվ 1527 որոշումը՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասով:
Կարեն Նահապետյանը վարչական բողոքում հայտնել էր, որ բողոքարկման առարկա հանդիսացող ք. Վանաձոր, Նարեկացու փողոցի սկզբնամասում, դեպի Վանաձոր-Սպիտակ տանող ճանապարհի աջ հատվածում կառուցված քարե շինությունը՝ բետոնե հենապատը կառուցվել է հանրապետական և միջքաղաքային նշանակություն ունեցող ճանապարհը քարաթափումներից և սողանքից զերծ պահելու նպատակով: Նարեկացու փողոցի թիվ 91 հասցեում գտնվող հասարակական սպասարկման նպատակով կառուցված շինությունը, որը սեփականության իրավունքով պատկանում է իր կնոջը՝ Լիլիթ Գևորգի Գիգոյանին, գտնվում է այդ նույն հենասյան հարևանությամբ, որի կառուցման համար ծախսվել է բավականին մեծ գումար, իսկ առանց այդ հենապատի, անձրևների դեպքում սողանքի վտանգի տակ է նաև այդ շինությունը: Այդ պատճառով կնոջը պատկանող շինության շինարարության ընթացքում արագ կառուցել են այդ հենասյուները՝ չհասցնելով ստանալ համապատասխան մարմնի թույլտվությունը: Ուստի, հաշվի առնելով վերոգրյալ փաստական հանգամանքները, ներդրված մեծ ֆինանսական միջոցները, Կարեն Նահապետյանը խնդրել է բավարարել իր կողմից ներկայացրած վարչական բողոքը՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասով և միևնույն ժամանակ հայտնել է, որ համաձայն է կատարել Վանաձոր համայնքի ղեկավարի 04 օգոստոսի 2020 թվականի թիվ 1527 որոշման 4-րդ կետով սահմանված պայմանը:

Կարեն Վարշամի Նահապետյանի 01 հոկտեմբերի 2020 թվականի վարչական բողոքի հիման վրա Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:
2020 թվականի հոկտեմբերի 16-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և ներկայացել էր Կարեն Վարշամի Նահապետյանը:

16.10.2020 թվականին կազմված արձանագրության համաձայն Կարեն Նահապետյանը պնդեց իր կողմից ներկայացված բողոքը և խնդրեց կրկին անգամ կատարել ուսումնասիրություններ տեղում և վերանայել Վանաձոր համայնքի ղեկավարի որոշումը՝ հայտնելով, որ պատրաստ է օրինականացնել իր կողմից կառուցված պատը:

Կարեն Նահապետյանը վարչական վարույթի լսման ընթացքում ներկայացրեց նաև Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 91 հասցեում գտնվող գույքի նկատմամբ իր կնոջ՝ Լիլիթ Գևորգի Գիգոյանի սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթ:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Վանաձոր համայնքի ղեկավարի 04.08.2020 թվականի թիվ 1527 որոշումը ընդունվել է ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 07.07.2020 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Կարեն Վարշամի Նահապետյանը (հասցե՝ ք. Վանաձոր, Միչուրինի փող. 34տ) Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի սկզբնամասում, դեպի Վանաձոր-Սպիտակ տանող ճանապարհի ուղղությամբ՝ ճանապարհի աջ հատվածում, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ կառուցել է քարե շինություն, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք է:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 2191-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում, որպես սեփական լիազորություն, կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Տվյալ պարագայում Կարեն Վարշամի Նահապետյանը Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի սկզբնամասում, դեպի Վանաձոր-Սպիտակ տանող ճանապարհի ուղղությամբ՝ ճանապարհի աջ հատվածում, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ կառուցել է քարե շինություն և իր կողմից ներկայացված վարչական բողոքում նշված փաստերը վարչական պատասխանատվությունից ազատելու հիմք չեն հանդիսանում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Կարեն Վարշամի Նահապետյանի վարչական բողոքը մերժել՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 30
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 նոյեմբերի 2020 թվականի N 1976

ԱՇՈՏ ՄԵՍՐՈՊԻ ԲԱԴԱԼՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի գրության համաձայն ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 15.10.2020 թվականին կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Աշոտ Մեսրոպի Բադալյանի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 15.10.2020 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Աշոտ Մեսրոպի Բադալյանը (հասցե՝ ք. Վանաձոր, Ռուսթավի փ., 14/1տ) Վանաձոր քաղաքի Յուբելյա փողոցի բարձրահարկ շենքի հարավային մասում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ տեղադրել է մետաղական կարկաս, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք է:

2020 թվականի հոկտեմբերի 15-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2020 թվականի հոկտեմբերի 29-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով ծանուցվել և չէր ներկայացել Աշոտ Մեսրոպի Բադալյանը: 20.10.2020 թվականին ուղարկված ծրարի հետադարձ ծանուցումը առկա չէ:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 49-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Աշոտ Մեսրոպի Բաղալյանի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4. Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով համայնքի ղեկավարին և դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 նոյեմբերի 2020 թվականի N 1977

ԱՐՄԵՆ ԿԱՐԼԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԱԶՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 45 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԿԱՐԿԱՍԸ ՔԱՆԴԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԿԻՆ ՏԵՍՔԻՆ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 13.07.2020 թվականին կազմված արձանագրություն և զեկուցագիր հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Արմեն Կարլենի Գրիգորյանի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 13.07.2020 թվականին տրված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Արմեն Կարլենի Գրիգորյանը (հասցե՝ ք. Վանաձոր, Լազյան փող. 45շ. 27) Վանաձոր քաղաքի Լազյան փողոցի թիվ 45 շենքի հյուսիսային մասում, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ տեղադրել է մետաղական կարկաս, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախատեսված արարք է:

2020 թվականի հուլիսի 13-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2020 թվականի հուլիսի 28-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով ծանուցվել էր Արմեն Կարլենի Գրիգորյանը:
13.07.2020 թվականին Արմեն Կարլենի Գրիգորյանին ուղարկված ծրարի հետադարձ ծանուցումը առկա չէր, որի հիման վրա Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 29 հուլիսի 2020 թվականին ընդունվել է «Արմեն Կարլենի Գրիգորյանի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնելու մասին» թիվ 1489 որոշումը:

Արմեն Գրիգորյանին ուղարկված որոշման ծրարը վերադաձել է «ժամանակավոր բացակա» նշումով, որից հետո «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի համաձայն 08.09.2020 թվականին որոշումը տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) և տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը որոշումը համարվել է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված):

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 16 սեպտեմբերի 2020 թվականին ներկայացվել է զեկուցագիր՝ Արմեն Կարլենի Գրիգորյանի վերաբերյալ հարուցված վարչական վարույթը վերսկսելու, Վանաձոր քաղաքի Լազյան փողոցի թիվ 45 շենքի հյուսիսային մասում, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ տեղադրված մետաղական կարկասը քանդելու և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը նախկին տեսքին բերելու մասին գործին ընթացք տալու վերաբերյալ:

Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 18 սեպտոմբերի 2020 թվականին ներկայացվել է նախազգուշացում, որով Արմեն Կարլենի Գրիգորյանին առաջարկվել է 5-օրյա ժամկետում, իր նախաձեռնությամբ քանդել Վանաձոր քաղաքի Լազյան փողոցի թիվ 45 շենքի հյուսիսային մասում, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ տեղադրված մետաղական կարկասը՝ հողամասը բերելով նախկին տեսքին, հակառակ դեպքում իր նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կկիրառվեն վարչական հարկադրանքի միջոցներ: Ծրարը վերադարձել է «չպահանջված» նշումով:

Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից դեռևս 16 ապրիլի 2020 թվականին ընդունվել էր նաև «Արմեն Կարլենի Գրիգորյանի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնելու մասին» թիվ 942 որոշումը՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 18.03.2020 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի հիման վրա:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Նշված վարչական վարույթի շրջանակներում հիմնավորվել է ինքնակամ կառույցը՝ համայնքային սեփականություն հանդիսացող և հողամասում կառուցված լինելու փաստը, և այն հանգամանքը, որ ինքնակամ կառույցը ենթակա չէ օրինականացման ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի թիվ 912-Ն որոշման շրջանակներում, որի վերաբերյալ առկա է Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 29 հոկտեմբերի 2020 թվականին տրված զեկուցագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական, եթե կառույցը պահպանելը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցները չեն կարող ճանաչվել օրինական, և դրանք ենթակա են քանդման, եթե կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին:

ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում, որպես սեփական լիազորություն, կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը հողօգտագործման բնագավառում, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 2-րդ կետով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ, 58–60-րդ հոդվածներով, 78-րդ, 84-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇԵՑԻ.

1. Արմեն Կարլենի Գրիգորյանի վերաբերյալ 13.07.2020 թվականին հարուցված վարչական վարույթը վերսկսել:

2. Չօրինականացնել Վանաձոր քաղաքի Լազյան փողոցի թիվ 45 շենքի հյուսիսային մասում, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ տեղադրված մետաղական կարկասը:

3. Հանձնարարել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին, աշխատակազմի օժանդակությամբ, քանդել Վանաձոր քաղաքի Լազյան փողոցի թիվ 45 շենքի հյուսիսային մասում, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ տեղադրված մետաղական կարկասը և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը բերել նախկին տեսքին:

4. Առաջարկել ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի պետին՝ սույն որոշման 3-րդ կետի համաձայն, Վանաձորի համայնքապետարանի կողմից վարչական հարկադրանքի

միջոցներ կիրառելու ընթացքում, համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:

5. Հանձնարարել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին՝ Վանաձորի համայնքապետարանի կողմից, սույն որոշման 3-րդ կետով նախատեսված վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու արդյունքում, սույն որոշմամբ նախատեսված քանդման ու դրան զուգորդող այլ աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերի գումարի չափով պահանջ ներկայացնել դատարան:

6. Սույն որոշման պահանջների կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի, իրավաբանական բաժնի, հասարակական կարգի պահպանության ծառայության պետի և Վանաձոր համայնքի ղեկավարի վրա:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

8. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

9. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

10. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունը հանձնարարել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 նոյեմբերի 2020 թվականի N 1978

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՆՁՈՐՈՒՏ ԹԱՂԱՄԱՍ 5-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 33 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԻՐԱՆՈՒՇ ՍՈՒՐԵՆԻ ԱՔՈՒԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սիրանուշ Սուրենի Աքուլյանի (ծնված՝ 16.09.1961թ.) դիմումը, 07.11.1967թ. տրված գույքային թերթը, 28.07.2020թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2489 (նոտարական ակտի կոդ: 763-20200727-84-4640063) վկայագիրը, 20.10.2020թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-150/20 Ի եզրակացությունը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամաս, 5-րդ փողոց թիվ 33 հասցեում կառուցած բնակելի տունը, շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ օրինական 810.0քմ հողամասին կից 141.1քմ մակերեսով հողամասերը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1970-2000թթ.-ին, դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 951.10քմ:
Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Ճանաչել Սիրանուշ Սուրենի Աքուլյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամաս 5-րդ փողոց թիվ 33 հասցեում գտնվող անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 810.0քմ հողամասին կից 141.1քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2.Ճանաչել Սիրանուշ Սուրենի Աքուլյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամաս 5-րդ փողոց թիվ 33 հասցեում գտնվող 951.10քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ք.Վանաձոր, Խնձորուտ թաղամաս, 5-րդ փողոց, թիվ 33 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 նոյեմբերի 2020 թվականի N 1979

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 61-3/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՂԱՎԱՐԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21052020-06-0030 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 61-3/3 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0.001711հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Փոխել Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 61-3/3 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող տաղավարի գործառնական նշանակությունը՝ հասարակականից՝ որպես բնակելի գործառնական նշանակությամբ շինություն՝ մառան:

3. Շինության գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

4. Հաստատել սույն որոշման մեջ նշված գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 61-3/3 մառան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 նոյեմբերի 2020 թվականի N 1980

ԱՆԻ ՄԱՆՎԵԼԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԵԶՐԱՓԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 02.10.2020 թվականին կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Անի Մանվելի Գասպարյանի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 02.10.2020 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Անի Մանվելի Գասպարյանը (հասցե՝ ք. Վանաձոր, Նժդեհի փ. 92, 31) Վանաձոր քաղաքի Նժդեհի փողոց թիվ 9/1-1 հասցեում և Նժդեհի 9 բազմաբնակարան շենքին կից՝ դեպի նկուղային հարկ տանող մուտքի աստիճանավանդակի վրա ինքնակամ կառուցել է հովար, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախատեսված արարք է:

2020 թվականի հոկտեմբերի 02-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2020 թվականի հոկտեմբերի 19-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել էին վարչական վարույթի մասնակիցներ Անի Մանվելի Գասպարյանը և Անուշ Սամվելի Մարտիրոսյանը:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից ներկայացվել է զեկուցագիր այն մասին, որ Անի Մանվելի Գասպարյանի կողմից Վանաձոր քաղաքի Նժդեհի փողոց թիվ 9/1-1 հասցեում և Նժդեհի 9 բազմաբնակարան շենքին կից՝ դեպի նկուղային հարկ տանող մուտքի աստիճանավանդակի վրա ինքնակամ կառուցված հովարը օրինականացման ենթակա կլինի միայն Նժդեհի փողոց թիվ 9 շենքի սեփականատերերի համաձայնությունից հետո:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով, 219[1]-րդ հոդվածով, 283-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, 53-րդ, 58-60-րդ, 78-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Անի Մանվելի Գասպարյանին առաջարկել մեկամսյա ժամկետում ստանալ բազմաբնակարան շենքի բոլոր սեփականատերերի գրավոր համաձայնությունը և Նժդեհի փողոց թիվ 9/1-1 հասցեում և Նժդեհի 9 բազմաբնակարան շենքին կից՝ դեպի նկուղային հարկ տանող մուտքի աստիճանավանդակի վրա ինքնակամ կառուցված հովարն օրինականացնելու նպատակով դիմել Վանաձոր համայնքի ղեկավարին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4. Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից կարող է բողոքարկվել վարչական կարգով Վանաձոր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 նոյեմբերի 2020 թվականի N 1981

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 12 ՄԱՐՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 459 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մայրանուշ Սեդրակի Ղազարյանի դիմումը, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին 04/04/2019թ. թիվ Մ-01/04/2019-34-0033 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 12 մարտի 2019 թվականի թիվ 459 որոշումը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված նոր տեղագրական հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը, 21.10.2020թ. գրությունը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 12 մարտի 2019 թվականի «Վանաձոր քաղաքի Լալվարի փողոցի թիվ 2 հասցեում կառուցված բնակելի տան ու հողամասի նկատմամբ Մայրանուշ Սեդրակի Ղազարյանի սեփականության իրավունքը ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 459 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման նախաբանում «Է.Ապրեսյան» բառերը փոխարինել «ԻՆԷՔՍ» բառով:

2. Որոշման նախաբանում և 1-ին կետում «399.0» թիվը փոխարինել «390.5» թվով:

3. Վանաձոր համայնքի ղեկավարի 12 մարտի 2019 թվականի թիվ 459 որոշման հատակագիծը փոխարինել համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հատակագծով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 նոյեմբերի 2020 թվականի N 1982

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 82 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 20-ի «Վանաձոր համայնքի 2020 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 82 որոշման հավելվածում կատարել լրացում ՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 03
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 նոյեմբերի 2020 թվականի N 1983

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 58/8-3, ԹԻՎ 58-9/1 ԵՎ ԹԻՎ 58-9/2 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԼԻԼԻԹ ԼԵՎՈՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լիլիթ Լևոնի Սահակյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18102019-06-0032, թիվ 29072019-06-0013 և թիվ 29072019-06-0011 վկայականները, Վանաձոր համայնքի ղեկավարի 08 սեպտեմբերի 2020 թվականի թիվ 64 ավարտական ակտը (շահագործման թույլտվություն), ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտա թիվ 58/8-3, թիվ 58-9/1 և թիվ 58-9/2 հասցեներում գտնվող Լիլիթ Լևոնի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր 0.0246հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Միավորել Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտա թիվ 58/8-3, թիվ 58-9/1 և թիվ 58-9/2 հասցեներում գտնվող Լիլիթ Լևոնի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող 0.0246հա ընդհանուր մակերեսով հողամասերը և 224.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 213.33քմ) խանութը՝ համաձայն ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Բաղրամյան պողոտա, թիվ 58-9/1 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 նոյեմբերի 2020 թվականի N 1984

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ (ՆԱԽԿԻՆ ԺԴԱՆՈՎ ԹԱՂ.) 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 48 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՆԱՍԱՐ ՍԱՄԱՆԴԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սանասար Սամանդի Գրիգորյանի (ծնված՝ 08.05.1956թ.) լիազորված անձ Սիմա Աղվանի Ֆռանգյանի (ծնված՝ 06.10.1990թ.) դիմումը, 17.07.2020թ. թիվ 16ԱԱ5450545 (նոտարական ակտի կոդ: 594-20200812-64-4665176) լիազորագիրը, 29.01.1990թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով թաղ.) 2-րդ փողոցի թիվ 48 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 539.2քմ օրինական հողամասը և դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1960-2007 թ.թ.:
Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Սանասար Սամանդի Գրիգորյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով թաղ.) 2-րդ փողոցի թիվ 48 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 539.2քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ բացառությամբ 15.05.2001թ.-ից հետո ինքնակամ կառուցված 2.74քմ արտաքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկից, 11.52քմ արտաքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկից և 11.60քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբից:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ք.Վանաձոր, Տավրոս թաղամաս, 2-րդ փողոց, թիվ 48 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 03
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 նոյեմբերի 2020 թվականի N 1985

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 23 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1265 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 05 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1529 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Փաշոյի Քառյանի դիմումները, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին 08/07/2020թ. թիվ Մ-08072020-06-0006 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 23 հունիսի 2020 թվականի թիվ 1265 որոշումը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված նոր տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 23 հունիսի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամաս, 1-ին փողոց, թիվ 28 (պայմանական) հասցեի բնակելի տան, շինությունների ու հողամասի նկատմամբ Սամվել Փաշոյի Քառյանի սեփականության իրավունքը ճանաչելու, հողամաս օտարելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1265 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման նախաբանում, 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում՝ «236.1» թիվը փոխարինել «188.6» թվով:

2) Որոշման նախաբանում և 2-րդ կետում «636.1» թիվը փոխարինել «588.6» թվով:

3) Որոշման 1-ին կետում «451900 (չորս հարյուր հիսունմեկ հազար ինը հարյուր)» բառերը փոխարինել «360990 (երեք հարյուր վաթսուն հազար ինը հարյուր իննսուն)» բառերով:

4) Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնին՝ Վանաձոր համայնքի ղեկավարի 23 հունիսի 2020 թվականի թիվ 1265 որոշմամբ սահմանված հողամասի օտարման համար կատարված վճարի տարբերությունը՝ 47.5քմ մակերեսով հողամասի համար 90910 (իննսուն հազար ինը հարյուր տասը) դրամ գումարը ետ վերադարձնել «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ «Լոռի» մասնաճյուղի 220053197194000 հաշվեհամարին:

5) Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 05 օգոստոսի 2020 թվականի «Վանաձոր համայնքի ղեկավարի 23 հունիսի 2020 թվականի թիվ 1265 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1529 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 03
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 նոյեմբերի 2020 թվականի N 1986

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂ ԹԻՎ 1/26 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1876411 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով և ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Ներսիսյան փող 1/26 հասցեում գտնվող, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 34.33քմ մակերեսով բնակելի գործառնական նշանակությամբ ավտոտնակը:
2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը օտարելու վերաբերյալ:
4. Վանաձոր քաղաքի Ներսիսյան փող թիվ 1/26 հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ք. Վանաձոր, Ներսիսյան փողոց, 1-ին փակուղի, թիվ 1-26/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 03
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 նոյեմբերի 2020 թվականի N 1987

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 31 ՀՈՒՆՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 186 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նախշուն Գառնիկի Մեջլումյանի դիմումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 10/03/2020թ. թիվ Կ-10032020-06-0136 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 31 հունվարի 2020 թվականի թիվ 186 որոշումը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված նոր հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 31 հունվարի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Շրջադարձային փողոցի թիվ 2 հասցեում գտնվող Նախշուն Գառնիկի Մեջլումյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած հողամասի ճշտված սահմանները հաստատելու, շինություններն օրինականացնելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 186 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1. Որոշման 1-ին կետը «հաստատված հատակագծի:» բառերից հետո լրացնել բովանդակությամբ. «Հողամասի ճշտված սահմանները հաստատելու անհրաժեշտությունը առաջացել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1982545 վկայականով հողամասի մակերեսը գրանցված է 0.06հա, սակայն սահմանային չափերով հողամասի հաշվարկային մակերեսը կազմում է 0.05536հա:

2. Վանաձոր համայնքի ղեկավարի 31 հունվարի 2020 թվականի թիվ 186 որոշման հատակագիծը փոխարինել համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հատակագծով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 03
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 նոյեմբերի 2020 թվականի N 1988

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի <<ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 82 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 20-ի «Վանաձոր համայնքի 2020 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 82 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 04
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 նոյեմբերի 2020 թվականի N 1989

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 274 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹՍ» ՍՊԸ-ի տնօրեն Արմեն Ազատի Մուրադյանի լիազորված անձ Արշակ Վաչագանի Հովսեփյանի դիմումը, 26.10.2020թ. թիվ 10.01 լիազորագիրը, Վանաձոր համայնքի ղեկավարի 28 դեկտեմբերի 2019 թվականի թիվ 274 շինարարության թույլտվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29092020-06-0057 վկայականը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 28 դեկտեմբերի 2019 թվականի թիվ 274 շինարարության թույլտվության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. «Արմեն Ազատի Մուրադյանին» բառերը փոխարինել ««ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹՍ» ՍՊԸ-ԻՆ» բառերով.

2. «և 60-1 հողամաս հասցեներում» բառերը փոխարինել «հասցեում» բառով.

3. 6-րդ կետում «N 04072019-06-0015» բառերը փոխարինել «թիվ 29092020-06-0057» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 04
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 նոյեմբերի 2020 թվականի N 1990

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀԱԿՈԲՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2-5-2/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՄԵՆ ՌԱՖԱՅԵԼԻ ՄԵՀՐԱԲՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Ռաֆայելի Մեհրաբյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26102020-06-0026 և Արմեն Ռաֆայելի Մեհրաբյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27122019-06-0065 վկայականները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Հակոբյան փողոց թիվ 2-5-2/3 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 200.0քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26102020-06-0026 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 588000 (հինգ հարյուր ութսունութ հազար) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արմեն Ռաֆայելի Մեհրաբյանին՝ կիսակառույց բնակելի տան ընդլայնման նպատակով:
2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արմեն Ռաֆայելի Մեհրաբյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 200.0քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 04
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 նոյեմբերի 2020 թվականի N 1991

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ ԿԱՄՍԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ԵՎ ՇԱՎԱՐՇ ԴԱՎԻԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ, ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ամուսիններ Սիլվա և Դավիթ Միքայելյանների դիմումը՝ իրենց անչափահաս երեխաների այլընտրանքային խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020թ. հոկտեմբերի 20-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 17, կետ 2), հաշվի առնելով, որ երեխաների մայրն ունի առողջական ծանր խնդիրներ, իսկ հայրը անկարող է իրականացնել երեխաների խնամքը և դաստիարակությունը և երեխաների կյանքն ու առողջությունը վտանգված են իրենց կենսաբանական ընտանիքում, ղեկավարվելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 110-րդ և 111-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 962-Ն և 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1112-Ն որոշումներով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Պ. Սևակի փողոցի թիվ 21 տան բնակիչներ Սիլվա Ստանիսլավի Միքայելյանի (ծնված՝ 08.08.1982թ., անձնագիր՝ AT0501119, տրված՝ 16.06.2020թ., 066-ի կողմից) և Դավիթ Կամսարի Միքայելյանի (ծնված՝ 21.07.1984թ., անձնագիր՝ AT0416548, տրված՝ 16.03.2020թ., 066-ի կողմից) կյանքի դժվարին իրավիճակում գտնվող անչափահաս երեխաներին՝ Կամսար Դավիթ Միքայելյանին (ծնված՝ 28.05.2013թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 260199, տրված՝ 01.06.2013թ., Վանաձորի ՔԿԱԳ տ/բ-ի կողմից) և Շավարշ Դավիթ Միքայելյանին՝ (ծնված՝ 04.10.2014թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 343564, տրված՝ 13.10.2014թ., Վանաձորի ՔԿԱԳ տ/բ-ի կողմից) որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, վերցնել սկզբնական հաշվառման:

2. Դիմել Լոռու մարզպետին՝ անչափահասներ Կամսար Դավիթ Միքայելյանի և Շավարշ Դավիթ Միքայելյանի այլընտրանքային խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 05

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2020 թվականի N 1992

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Տ. ՄԵԾԻ ՊՈՂ ԹԻՎ 12/4-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՂԱՎԱՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ, ՏԱՂԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոբերտ Ռաֆիկի Մաթևոսյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1932646 վկայականը, Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 19 նոյեմբերի 2010 թվականի թիվ 1556 որոշումը, 02.12.2010թ. տաղավարի վարձակալության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 628 պայմանագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման 46-րդ կետի դ) ենթակետով, ՀՀ կառավարության 28.03.2013թ. թիվ 276-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով, Վանաձոր համայնքի ավագանու 23 դեկտեմբերի 2019 թվականի թիվ 175-Ն որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 1-ին և 4-րդ կետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Տ.Մեծի պող թիվ 12/4-1 հասցեում գտնվող 7.74քմ մակերեսով տաղավարի վարձակալության և դրանով զբաղեցված 7.74քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2023 թվականի նոյեմբերի 19-ը և տաղավարի վարձավճարի չափը փոփոխել:
2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ռոբերտ Ռաֆիկի Մաթևոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 7.74քմ մակերեսով տաղավարի վարձակալության և դրանով զբաղեցված 7.74քմ մակերեսով հողամասի կառուցապատման պայմանագրի ժամկետը երկարաձգելու, տաղավարի վարձավճարի չափը փոփոխելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր՝ տաղավարի յուրաքանչյուր 1.0քմ-ի համար վարձավճարի չափը սահմանելով ամսական 800 (ութ հարյուր) դրամ և հողամասի յուրաքանչյուր 1.0քմ-ի համար վճարի չափը սահմանելով ամսական 800 (ութ հարյուր) դրամ:
3. Հաստատել Վանաձոր քաղաքի Տ. Մեծի պող թիվ 12/4-1 հասցեում գտնվող գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 12/4-1 տաղավար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 06
ք. Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2020 թվականի N 1993

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Գ. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 49-3/9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԽԱՆՈՒԹԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱԼՎԱՐԴ ՎԱՂՈՅԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալվարդ Վաղոյի Մկրտչյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27102020-06-0004 և Ալվարդ Վաղոյի Մկրտչյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16122013-06-0053 վկայականները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Գ. Լուսավորչի փողոց թիվ 49-3/9 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 27.58քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27102020-06-0004 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 124780 (հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Ալվարդ Վաղոյի Մկրտչյանին՝ խանութի ընդլայնման նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ալվարդ Վաղոյի Մկրտչյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 27.58քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 06
ք.Վանաձոր